ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	**ԱՐՄԱՎԻՐ**
ՄԱՐԶ	**ՄՈՒՍԱԼԵՌ**

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մուսալեռ, գյուղ Հայաստանի Արմավիրի մարզում:- Փարաքարի, Վարմազիարի (Արևաշատ) և Զվարթնոցի միջև ընկած վայրը հայտնի է եղել Նասիրապատ անունով. եղել է ամայի ղռեր: Երևանի օկրուգային դատարանի անդամ Ներսես Աթաբեկյանը 1880 թ. դիմում է փոխարքային՝ խնդրով, որ իրեն հող տրամադրեն Աթաբեկյանների՝ Ղարաբաղում ունեցած նախկին գյուղերի փոխարեն: Նույն թվականին Ցարական կառավարող սենատի հրամանով Երևան նահանգում գտնվող Նասիրապատի զգալի մասը տրվում է Ն. Աթաբեկյանին՝ առհավետ և ժառանգաբար տիրելու: Հետագայում կալվածքը կոչվել է Ներսեսապատ, ապա Շադրլու: Աթաբեկյանները կարողացել են ջրովի դարձնել միայն կալվածքի կեսը: Մշակել են բամբակ, հացահատիկային կուլտուրաներ, առվույտ և այլն: 1905-1908 թթ. կալվածքում կառուցվել է բամբակազտիչ և բրինձ մաքրող փոքր գործարաններ՝ ամրապնդելով հողագործության առևտրա-արդյունաբերական բնույթը: Սակայն տարիների ընթացքում հողերի բերրիության ընկնելու պատճառով տնտեսությունը սկսվում է քայքայվել:
1920թ. կալվածատիրական հողերն ազգայնացվում են բոլոր և հիմնականում տրամադրվում տնտեսություններին: 1921թ. Աթաբեկյանների նախկին կալվածքում սկսվում են սովխոզի կազմակերպման աշխատաանքները: Աստիճանաբար զարգանում է գյուղատնտեսությունը և տնտեսապես ապրապնդվում:1930-ականներին նոր էտապ է սկսվում սովխոզի պատմության մեջ. տնտեսությունում կատարվում են ջրաշինարարական-մելիորատիվ աշխատանքներ, հիմնվում են խաղողի և պտղի նոր այգիներ: Հայաստանի ողջ տարածքում առաջին անգամ Նասիրապատում է օգտագործվում էլեկտրագութանը (1933թ.): Հայրենական պատերազմից առաջ այգիների տարածությունը կազմում էր շուրջ 250 հա: Հայրենական պատերազմի տարիներին սովխոզը կարողանում է պաշտպանել իր նվաճումները և պետությանը տալ հազարավոր տոննա խաղող, պտուղ և այլ գյուղատնտեսական մթերքներ: Տարիների ընթացքում Նասիրապատում կառուցվում են գյուղատնտեսական մթերքների արտադրման խոշոր կենտրոններ, հասարակական, կենցաղային և կոմունալ սպասարկման այլ օբյեկտներ:Հայրենական պատերազմի տարիներին կառուցվում է մշակույթի տունը՝ 450 նստատեղ ունեցող դահլիճով: Վերջինս ուներ երգի և պարի անսամբլ՝ ավելի քան 40 նվագողներով, երգողներով և պարողներով: Մշակույթի տանը կից գործել է նաև գեղարվեստական և մասնագիտական գրականությամբ հարուստ գրադարան և ընթերցասրահ: Կոմերիտական կազմակերպության ակտիվ մասնակցությամբ սովխոզի կենտրոնում կառուցվել է ֆուտբոլի դաշտ, վոլեյբոլի և բասկետբոլի հրապարակներ, կազմավորվել ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի թիմեր: Կառուցվել է 25մ երկարությամբ լողավազան: Այստեղ հիմնականում բնակություն են հաստատել և աշխատել նախկին բատրակներ, առաջին համաշխարհային պատերազմի և թուրքական արշավանքների ժամանակ գաղթած ընտանիքներ և հետագայում տարբեր երկրներից Հայաստան վերադարձած տարագիր հայ ընտանիքներ:Բնակչության մի մասը հայրենադարձել են Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից, Կիլիկիայի Մուսալեռի գյուղերից,Իրանից 1946 թվականին:Սովետական Հայաստանի սոցիալիստական տնտեսության առաջին օջախը 3-րդ սովխոզն է եղել, որը 1943թ. կոչվել է Ա. Միկոյանի անունով: ՀՍՍՌ գերագույն սովետի նախագահության 1957թ. դեկտեմբերի 30-ի հրամանով Միկոյանի անվան N3 սովխոզը կոչվել է Գինեվետ, այնուհետև, 1972թ. Հայաստանի գերագույն խորհրդի հրամանագրով Էջմիածին շրջանի Գինեվետ ավանը վերանվանվել է է Մուսալեռ ավանի : Մուսալեռ գյուղը ներկայումս ունի 2996 բնակիչ: Բնակչության մի մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Հիմնականում մշակվում է խաղող, պտուղ, ցորեն, առվույտ և բանջար-բոստանային կուլտուրա: Գյուղում այժմ գործում են «Մուսալեռի տպագրատուն» ՍՊԸ-ն, Պոլիէթիլենային տոպրակների արտադրամասը, Գինու գործարանը,«Կրադան» ՍՊԸ-ն: Համայնքն ունի բուժական ամբուլատորիա, դպրոց, մանկապարտեզ, իսկ մշակույթի տունն այժմ, ցավոք, գտնվում է քանդված վիճակում: Ունի սպորտդահլիճ,զբոսայգի: Համայնքում 2001թ. կառուցվել է «Սուրբ ամենափրկիչ» եկեղեցին:Գյուղի ուշագրավ կառույցը նրա հյուսիս-արևելքում, բարձունքի վրա կանգնեցված հուշարձանն է՝ ի հիշատակ 1915

թվականի Մուսա լեռան հերոսական մարտերի(կառուցվել է 1976 թ.):

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Մուսալեռ համայնքը գտնվում է Արմավիրի մարզի արևելյան մասում, Երևան-Վաղարշապատ մայրուղու աջ և ձախ կողմերում,հարթավայրում: Տարածքը կազմում է 6.35 կմ^2: Համայնքը սահմանակից է մարզի Արևաշատ, Պտղունք, Փարաքար,Զվարթնոց, Նորակերտ, Բաղրամյան, Ոսկեհատ համայնքներին: Համայնքի հեռավորությունը պետական սահմանից կազմում է 22 կմ, մարզկենտրոնից՝ 32 կմ, ավտոմայրուղուց՝ 1 կմ, Երկաթուղուց՝ 26 կմ, ՀԱԷԿ-ից՝ 24 կմ: Կլիման չոր ցամաքային է: Ամառը շոգ է, չորային և տևական (4-5 ամիս):Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է 13-ից 39 աստիճան ըստ Ցելսիուսի: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Ձմեռը ցուրտ է, անամպ,անհողմ:Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -25 աստիճան ըստ Ցելսիուսի: Հաստատուն ձնածածկույթ ամեն տարի չէ, որ ձևավորվում է:Գարունը կարճատև է: Բնորոշ են անկայուն եղանակները և համեմատաբար առատ տեղումները: Հրաշալի է արևոտ, տևական աշունը: Տարեկան միջին ջերմաստիճանը 12.3°C է, առավելագույնը՝ 40°C, նվազագույնը՝ - 28°C, տարեկան միջին տեղումները՝ 300 մմ (առավելագույնը՝ ապրիլ-մայիս ամիսներին):

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջինտարեկան քանակը (մմ)	300
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին(^{0}C)	-28
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին(^{0}C)	40

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Միկոյանի անվան N 3 սովխոզ ,Գինեվետ
3.Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	12
3.2) մարզկենտրոնից (կմ)	34

3.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	10	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	7	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	1.5	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	26	
4.Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	850	
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	6.35	
6.Սահմանակից համայնքների անվանումները	Պտղունք,Փարաքար,Զվարթնոց,Նորակերտ,Բաղրամյան,Ոսկեհատ	
7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	musaler.armavir@mta.gov.am	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	https:llmusaler.am	
9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	077-77 -79 -55	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	+374/0231/6-47-22	
11.Համայնքի հեռախոսային կոդը	+374/0231/	
12.Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ)	այո	
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	1140	
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ	

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2966
2. Գրանցված ծնունդների քանակը	29
2.Մահացության դեպքերի քանակը	34
3.Ամուսնությունների քանակը	6
4. Ամուսնալուծությունների քանակը	—
5. Տնային տնտեսությունների թիվը	765
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	36
7. Կենսաթոշակառուների քանակը	504
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	92

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	—
2. Արվեստի դպրոցների քանակը	—
3. Երաժշտական դպրոցների քանակը	—
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	—
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	—
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	—
9. Մարզադպրոցների քանակը	—

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	44461
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	197
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	291

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1.Հողեր, ընդամենը (հա)	635.29
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	443.29
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	152.97
4.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	85
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	—
7. Խոզերի գլուխաքանակը	37
8. Գյուղատնտեսական տեխնիկա	1

8.1 տրակտորներ (քանակը)	1
8.2 կոմբայններ (քանակը)	
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	765

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1.Էլեկտրական ենթակայանների քանակը	7
2.Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3.Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	60-70
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	—
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	—
6.2 Էքսկավատորների քանակը	—
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	—
6.4 Գրեյդերների քանակը	—
6.5 քանակը	—
6.6 Աղբատար մեքենաների քանակը	—
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	—
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	—
6.9 Ավտոաշտարակների քանակը	—
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	4
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	—
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1.Ընդամենը եկամուտներ	64144.0	60609.0
2. Հարկային եկամուտներ, ընդամենը Այդ թվում՝	25710.7	22175.7
2.1 հողի հարկ	6811.8	5266.1
2.2 գույքահարկ	12058.4	12175.3
3. Պաշտոնականտրանսֆերտներ, ընդամենը	38433.3	38433.3
3.1 դոտացիա	38433.3	38433.3
3.2 սուբվենցիա	0	0
4.Մուտքեր հողի օտարումից	0	446.5

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**

1. Ընդամենը ծախսեր	64144.0	55180.3

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	640.6	640.6

Ֆոնդային բյուջեի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	7756.9	6855.2

11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	10 5
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	18500.0
3. Ավագանու անդամների թվաքանակը	9

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	**Ակնկալվող լուծումը**
Փողոցների գազաֆիկացում	Այլ աղբյուրների ներդրումների և դրանց հետ համաֆինանսավորմամբ աշխատանքների իրականացում:
Ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում	Այլ աղբյուրների ներդրումների և դրանց հետ համաֆինանսավորմամբ աշխատանքների իրականացում: